ԿԱՐԾԻՔ

Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար ներկայացված Գոռ Արայիկի Խաչատրյանի «Պետական պարտքի կառավարման ստրատեգիաներ (ՀՀ օրինակով)» թեմայով ատենախոսության վերաբերյալ

Ատենախոսության թեմայի արդիականությունը

Պետական պարտքի կառավարման ստրատեգիաների մշակումն ու իրացումը համարվում է պետական պարտքի քաղաքականության անկյունաքարը: Պետական պարտքի կառավարումը ենթադրում է ստրատեգիաների մշակման և կիրառման միջոցով կառավարության ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար անհրաժեշտ միջոցների ներգրավման պրոցես, ինչի ընթացքում պահպանվում են ռիսկի և ծախսի սահմանված թիրախները, ինչպես նաև բավարարվում են կառավարության կողմից նախանշված այլ նպատակներ, այնպիսին, ինչպիսին է՝ կառավարության արժեթղթերի արդյունավետ շուկայի ձևավորում և զարգացում:

Վերջին տասնամյակներում առկա է պետական պարտքի արդյունավետ կառավարման խիստ ընդգծված պահանջ, ինչն առավելապես կարևորվում է համաշխարհային, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության պետական պարտքի պաշարի ցուցանիշի անընդհատ աճի միտման ենթատեքստում: Պետական պարտքի քաղաքականության արդյունավետության բարձրացումը կարևորվում է նաև կայուն մակրոտնտեսական միջավայրի ձևավորման անհրաժեշտությամբ և երկարաժամկետ հատվածում տնտեսական զարգացման տեսանկյունից պարտքի արդյունավետ կառավարմանը վերապահված նշանակալի դերակատարմամբ: Ի հեռուկս պարտքի արդյունավետ կառավարմանը, պետական պարտքի կառավարման ոչ արդյունավետ ռազմավարության կիրառման պարագայում ռիսկի է ենթարկվում մակրոտնտեսական միջավայրի կայունության ապահովումը: Բացի այդ, պարտքի ոչ արդյունավետ կառավարմամբ երկիրը բացասական ազդակներ է ուղարկում միջազգային ներդրողներին, ինչը, վնասելով կառավարության հեղինակությունը և վարկունակությունը, կարող է հանգեցնել պարտքի ներգրավման ծախսերի ավելացմանը:

Վերոգրյալից բխում է պետական պարտքի կառավարաման արդյունավետության բարձրացման նպատակով պարտքի էֆեկտիվ և արդիական ստրատեգիաների մշակման և կիրառման անհարժեշտությունը, ինչն էլ հաստատում է սույն ատենախոսության թեմայի արդյիականությունը:

Ատենախոսության նպատակը և խնդիրները

Հետազոտության հիմնական նպատակն է հանդիսանում ՀՀ պետական պարտքի կառավարման տեսանկյունից գործնական կիրառություն ունեցող

ստրատեգիաների առաջադրումը, որոնք կարող են նշանակալիորեն բարձրացնել պարտքի կառավարման արդյունավետությունը: Այս նպատակին հասնելու համար ատենախոսության շրջանակներում դիտարկվում են երկու հիմնական ուղղվածություններ: Առաջինը՝ պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացում պարտքի վերակազմավորման միջոցով, ինչի համար դիտարկվում են երկու տիպի ֆիքսված եկամտով արժեթղթեր՝ հասարակ արժեկտրոնային պարտատոմս և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմս: Երկրորդ՝ այլընտրանքային ուղղվածությունն է արտահանման խթանման միջոցով պետական պարտքի կառավարման արդյունավետության բարձրացման քաղաքականությունը:

Ատենախոսության նպատակի իրագործման համար դրվել են հետևյալ խնդիրները՝

- հետազոտել հասարակ արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը՝ սփոթ կորի տարբեր տեսքերի և պարտատոմսերի պարամետրերի հավասարության ենթադրության պայմաններում,
- պարտատոմսերի պարամետրերի հավասարության և համահարթ սփոթ կորի ենթադրության ներքո ներկայացնել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի գների միջև ֆունկցիոնալ կապը,
- սահմանել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի Մաքոլիի դյուրացիաների միջև կապը,
- սահմանել հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի ձևափոխված դյուրացիաների միջև կապը,
- ՀՀ տնտեսության օրինակով, գնահատելով կարճաժամկետ և երկարաժամկետ հատվածներում իրական արդյունավետ փոխարժեքի և փոխարժեքի տատանողականության նկատմամբ արտահանման էլաստիկության գործակիցները, քննության առնել պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման հնարավորությունը ազգային արժույթի արժեզրկմամբ արտահանման խթանման քաղաքականության միջոցով:

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքները և նորույթը

Ատենախոսության հիմնական գիտական արդյունքներն են՝

- Նելսոն-Սիգելի մոդելի միջոցով և թվային մեթոդների կիրառմամբ սահմանվում է հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը,
- ձևակերպվում և ապացուցվում է թեորեմ, ինչը սահմանում է հասարակ

արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի գների միջև ֆունկցիոնալ կապը՝ համահարթ սփոթ կորի և պարտատոմսերի պարամետրերի հավասարության ենթադրության պայմաններում,

❖ որոշ ենթադրությունների ներքո ձևակերպվում և ապացուցվում են թեորեմներ, որոնք սահմանում են հասարակ արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի դյուրացիաների միջև կապը,

❖ Հայաստանի տնտեսության օրինակով, պարտքի կառավարման տեսանկյունից արտահանմանը վերապահված առանցքային դերակատարման համատեքստում, էկոնոմետրիկ և վիճակագրական մեթոդների կիրառման միջոց գնահատվում են արտահանման հավասարման մի քանի սպեցիֆիկացիաներ,

❖ ատենախոսության շրջանակներում ստացված գիտական արդյունքների հիման վրա առաջադրվում են պարտքի կառավարման ստրատեգիաներ:

Ատենախոսության կառուցվածքը և հիմնական բովանդակությունը

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, երեք գլխից, եզրակացությունից և օգտագործված գրականության ցանկից:

Ատենախոսության **ներածությունում** հիմնավորվում է հետազոտության արդիականությունը, ամփոփ շարադրվում են աշխատանքի հիմնական նպատակը և խնդիրները, հետազոտության օբյեկտը և առարկան, աշխատանքի տեսական, մեթոդական ու տեղեկատվական հիմքերը, հիմնական արդյունքները և գիտական նորույթը: Ներածությունում ներկայացվում են նաև ատենախոսության արդյունքների գործնական նշանակությունը, ատենախոսության կառուցվածքն ու ծավալը:

Ատենախոսության **առաջին գլխում** ներկայացվում են որոշ զարգացած երկրների կենտրոնական բանկերի և պարտքի կառավարման գործակալությունների կողմից պետական պարտքի ռազմավարության և ստրատեգիաների մշակման նպատակով կիրառվող ստոխաստիկ սիմուլյացիոն մոդելները:

Ատենախոսության **երկրորդ գլխում** հասարակ արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի պարամետրերի հավասար լինելու ենթադրության պայմաններում հետազոտվում է պարտատոմսերի մինչև մարում եկամտաբերությունների համատեղ վարքագիծը՝ սփոթ կորի տարբեր տեսքերի դեպքում: Երկրորդ գլխում սահմանվում է պարտատոմսերի գների միջև ֆունկցիոնալ կապը՝ պարտատոմսերի պարամետրերի հավասարության և համահարթ կորի ենթադրության պայմաններում: Հետազոտվում է նաև հասարակ արժեկտրոնային և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսերի դյուրացիաների միջև կապը: Ստացված արդյունքների հիման վրա առաջարկվում է պետական պարտքի կառավարման ստրատեգիա:

Երրորդ գլխում քննության է առնվում պարտքի կառավարման քաղաքականության արդյունավետության բարձրացման այլընտրանքային եղանակ՝ հենված ազգային արժույթի արժեզրկման միջոցով արտահանման խթանման

քաղաքականության վրա: Երրորդ գլխում ներկայացվում են էկոնոմետրիկ մեթոդների կիրառման միջոցով արտահանման հավասարման տարբեր սպեցիֆիկացիաների գնահատման արդյունքները, որոնք հիմք են հանդիսանում պետական պարտքի կառավարման ստրատեգիայի մշակման համար:

Ատենախոսության **եզրակացություններ** բաժնում ամփոփված են ատենախոսական աշխատանքի հիմնական արդյունքները:

Ատենախոսության արդյունքների տեսական և գործնական նշանակությունը

Ատենախոսության հիմնական արդյունքներն ունեն հետևյալ կիրառելիությունները՝

- կարող են օգտագործվել ՀՀ պետական պարտքի կառավարման քաղաքականության մշակման նպատակով,
- կարող են կիրառվել պարտատոմսերից կազմված պորտֆելների կառուցման նպատակով,
- կարող են օգտագործվել պարտատոմսերից կազմված պորտֆելների ռիսկերի կառավարման նպատակով,
- կարող են հիմք հանդիսանալ այլ հետազոտական աշխատանքների համար:

Դիտողություններ

Ատենախոսությունը հանդիսանում է ծավալուն հետազոտական աշխատանք, որի շրջանակներում ստացվել են կարևոր գիտական նշանակության արդյունքներ: Այնուամենայնիվ, ատենախոսության վերաբերյալ առկա են որոշ դիտողություններ և առաջարկություններ՝

1. Ատենախոսության 2.2 ենթագլխում հասարակ արժեկտրոնային պարտատոմսի և մասնակի մարումներով արժեկտրոնային պարտատոմսի մինչև մարում եկամտաբերությունների միջև կապը սահմանելու նպատակով թվային մեթոդների կիրառմամբ մշակվել է եռաքայլ ալգորիթմ, որի երրորդ քայլով սիմուլյացված տվյալների վրա, կիրառելով գծային ինտերպոլացիայի մեթոդը, գնահատվում են համապատասխան ինտերպոլանտները: Վերլուծությունը կշահեր, եթե գծային ինտերպոլացիայի մեթոդից բացի կիրառվեր նաև գծային ռեգրեսիոն մեթոդը:
2. Ատենախոսության 3–րդ գլխում գնահատվում են արտահանման հավասարման թվով վեց մոդելներ, որոնք գծային ռեգրեսիոն հավասարումներ են: Նմանօրինակ խնդիրներում առավել տարածված մոտեցումներից է օգտագործել VAR և SVAR մոդելները: Եթե մոդելներում որպես անկախ փոփոխական դիտարկվեր օրինակ պղնձի միջազգային գինը՝ պայմանավորված հանգամանքով, որ Հայաստանի ապրանքային արտահանման զգալի մասը կազմում է պղնձի խտանյութը, ապա VAR և SVAR մոդելների կիրառումը առավել անհրաժեշտ կլինեին: Բացի այդ,

աշխատանքը կշահեր, եթե մոդելներում որպես անկախ փոփոխական դիտարկվեին ապրանքների միջազգային գները:

3. Ատենախոսության 3.2.5 ենթագլխում արտահանման բազային հավասարման (մոդել 1) հիման վրա, օգտագործելով ռոլինգ ռեգրեսիայի մեթոդը, գնահատվում է իրական արդյունավետ փոխարժեքի նկատմամբ արտահանման էլաստիկության գործակցի դինամիկան: Վերլուծությունը կշահեր, եթե ռոլինգ ռեգրեսիան կիրառվեր այլ ռեգրեսիոն մոդելների համար ևս:

Եզրակացություն

Ընդհանուր առմամբ, դիտողությունները միտված են հետազոտական աշխատանքի շարունակականության ապահովման խրախուսմանը և հետագա հետազոտական ուղղությունների առաջադրմանը: Վերոշարադրված դիտողություններն ընդհանրապես չեն նվազեցնում ատենախոսական աշխատանքի գիտական արժեքը:

Գոռ Արայիկի Խաչատրյանի ատենախոսությունը ինքնուրույն, ամբողջական հետազոտություն է, որն ունի գիտական նշանակալի արժեք: Ատենախոսության արդյունքներն ունեն թե՛ տեսական, թե՛ գործնական բնույթ, ու դրանց կիրառումը կարող է նպաստել ՀՀ պարտքի կառավարման էֆեկտիվությանը:

Սեղմագիրը համապատասխանում է ատենախոսության բովանդակությանը և ներառում աշխատանքի հիմնական դրույթներն ու արդյունքները: Հեղինակի հետազոտության հիմնական արդյունքները տպագրված են թվով 3 (երեք) գիտական հոդվածներում, որոնցից 2-ը (երկուսը) Scopus շտեմարանում ընդգրկված միջազգային հեղինակավոր գիտական պարբերականներում:

Գոռ Արայիկի Խաչատրյանի **«Պետական պարտքի կառավարման ստրատեգիաներ (ՀՀ օրինակով)»** թեմայով ատենախոսությունը համապատասխանում է Հայաստանի Հանրապետությունում գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 6-րդ և 7-րդ կետերի, ինչպես նաև թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ հեղինակն արժանի է Ը.00.08 «Մաթեմատիկական տնտեսագիտություն» մասնագիտությամբ տնտեսագիտության թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Պաշտոնական ընդիմախոս
տնտեսագիտության թեկնածու **Ե. Հակոբյան**

Ե. Հակոբյանի ստորագրությունը հաստատում եմ
պ.գ.թ., ԵՊՀ գիտական քարտուղար **Լ. Հովսեփյան**

18 սեպտեմբերի 2020թ.